

የኢትዮ ቤንታዊ ማረጋገጫ

ԷՐԵՄԻԱՆԻ ԱԴ ԲԱԴՐԱՏՈՒՆԻ

Վանմահունքար և զերզօն ամենացանկալի
Հօրդ սրբութեան աջոյ համբոյր խոհար-
հական հուփիրնմ խորին ակնածոռքամբ.

Ապաբըն անտեղի կամ յաւտ իմն զարմանք երեւի քեզ այս, ո՛վսեմախոն Հայր, անծանօթիս և յոյժ ստորնագունիս՝ այսպիսեց իրրեւ ծանօթագոյն առ ցանկալիդ խօսել՝ ոչ ճանաչելով տրուակ անձին մերում զշափ. որով յանդուզն կամ մանաւանդ ծանծազամիտ երեւիմ այսու, թէ և ոչ բոյդ խոնարհամութեան առաջի, որ համբուղասէր բնութեամբ և վեհանձնական առաջինութեամբ միշտ զիջանի առ անձն նուաստագոյն: Վասն որոյ ժաեմ զիներողամիտ առ այս լինիցիս, և յոյժ ծանօթագոյն և մերծաւոր զմեզ համարիցիս յաղագս համազգութեան, նա առաւել ըստ հոգեւորին՝ սակա հաւատոյն միութեան և ի մի հոգի մկրտելոյն:

Ճհոտաէս աննիւթական վարդն զեղեցիկ, զոր ի բուրաստանէ ճոխածիր ոգւոյշ արկեր ի շավկա փշալից կենաց իմաստնոց, ընկալայ և հոտոտաեցայ (որպէս ինձ թուի՛ յառաջազոյն քան զայլս), և բուրեաց ինձ հոտ անոյշ և զմայլեցուցիչ, որ ընդ ամենայն մասունք ոգւոյս զգայութեան անցեալ՝ իսպան թմբեցոյց զիս։ Այն զի զօրաւոր եք սցանչելի հոտովն և կարի գրաւող զոնգունք նորուն՝ որ հայրենի զգացողութեամբ առաւել զգայուն է ի հոտառութիւն այն վարդին, որ երբեմն յԱյրաբառ առ զրախտին բռւաննէր։ Եւ զօրութիւն վարդիդ ոչ միայն զմայլումն թմբութեան յիս ներգործեաց, այլ և զայլ իմ զօրութիւն ետ ոգւոյս, որ բաւական եղեւ բուսուցանելի ի մոտաց բուրաստանէն զրողրոջ վարդից, զոր ահա ի փունջ կապեալ իբր առհաւատչեայ քեզ պատուական հօրդ զառաջինն ընծայեմ։ զոր սիրով առընկաւեալ հոտոտաեցիս և յաւէսու ուրախ ինեւ

ցիս ի բայդ արդինս, որ յիս չեղեւ ընդունայն: Եւ զի ոչ ըստ օրինակի Մառային անհաւատարիմ՝ առեալ թագուցիք ի սրտի, անպատուղ առնելով և անշահ թողով զտաղանդ մեծ՝ զոր արկեր յոգիս հայտնեամանկուոյն:

Ջպտուզ մերս երախայրեաց յօժարեց
շաք նախ իմաստուն Հօրդ նոռիբեկ առ ի
զտհաստովիւն և զանհամովիթիւն նորուն ի
քէն ճարտար մշակողէ միայն ուսանել և
ըստ այնմ հասուն առնել և անուշել: Այլ
եթէ հեշտալի և քաղցր թուի հանճարեղ
ոգույդ ախորդակին՝ մեր այս պտղոյն ճա-
շակումն, ժտեմք զի քեւ և իմ հայրենա-
կից մանկունք վայելեսցեն. այս է եթէ
սակաւ իցեն թերութիւնը չափեալ բա-
նիցս, ուղղելով զայնս իրրեւ աշակերտի
բան՝ տացես արձանազրել ի բազմավիշպն՝
առաքելով առ Երջանիկ Միսիթարեան
Ուուրը Ռէխտն իրրեւ կամօց և հաւանու-
թեամբ քոյին. քանզի վստահ եմ ամե-
նայնիւ եթէ զոր Հայրդ ընդունիցի հա-
ճեալ, ոչ ոք զորէ պարսաւել և անհանոյ
առնեն զմեր դոյզն աշխատասիրութիւն: Եւ
զայս ոչ եթէ առ պարծանաց անուան մե-
րում ժտեմ, այն զի եւս ատրուկ անծա-
նօթ ամեննեցուն տառապեալ պանդուխտ
մի եմ. այլ միայն ընդ բազմաց և ես
վկայ քոյդ գովելի արդեանց կացից, ոչ
բանիւց եւեթ, այլ և այսու արդեամբ,
միանգամայն և նախանձ. արկից թերեւ
ամենայն բանասիրաց՝ հետեւել մըտադիւր
զինի զեղեցիկ շաւացդ, զոր հորդեալ
դիւրացուցեր նոցուն առաջի:

Գիտեմք ստուգապէս զի յօրինուածն մեր սակաւ ինչ հեռի է ի նպատակէն Բազմավիճակ օրագրին յաղագ փորը մի երկարութեան, կամ մանաւանդ ոչ այն- չափ զուարձալի լինելոյն, որ է յատկու- թիւն բանաստեղծութեան, քան եթէ հա- մեստ և ծանր, որ հայկական ոգւոյն սեպ- հական ձիր : Այլ եթէ այսու մասամբ զուարձախնդիր ոգւոյն անախորժ կայցէ, լիցի ուրեմն ախորժ գէթ սիրողին հա- մեստ բանիր :

Նաև և զայս եւս խոստովանիմ իրաւա-
A.R.A.R. @

պէս առաջի անաշառ գատարննչիդ, իրրեւ մուրացածոյ և ոչ տիրապէս բանաստեղծութիւն վարկանելով զերզս մեր, ըստ որում ամենայնիւ նիւթք չափեալ բանիցս հանեալը են ի պատմագրութենէ խորենացոյն, և այն եւս ըստ մեծի մասին պատմական պարզ ոճով չափեալ. և այս՝ կամ առ աղքատ մտացս անբաւականութեան, և կամ ի դիւրութիւն վերծանութեան համբակագունիցն իրրեւ զիս: Բայց այսու ամենայնիւ չկարեմք կեղծիւք խօսել մեծիմաստ Հօրդ առաջի, որ բաջ գիտէ կշուն զարդինս և զօրութիւնս բանից իւրաքանչիւր բանասիրաց:

Հապա առ և ընկալ հաճոյապէս զայս նորեկ բարբառ իրրու ի լեզուէ թոթովախօս և անկատար, թէպէտեւ իրրեւ անյօդ և աննշան բերիցի քրյին նուրբ լսելեաց: Եւ եթէ ծիծաղեցիս ընդ երեսս իմ և խաղացես ընդ իս նմա հօրն որ զնորախօսիկ մանկամբ իւր զուարճանայ ծիծաղեցիմ ցուցանելով նմա զինքն, յաւելում առաւել եւս, յայնժամ այսպիսեօք միշտ բարբառ աննշան յօնել ի լուր անձկալի Հօրդ, մինչեւ հասանիցէ լեզուն իմոյս մոտաց ի չափ իւրումն կատարելութեան օր ըստ օրէ զրովք վարժութեան հաստատեալ:

1849 ապրիլ 15

Ամենախոնարհ Յուաստ
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԵՄԵԱՆ ՎԱՆԵԱՑ

Առ մեծաւարւ և Գերաւանեար
Հայր Առաք կոմիտաս Բարգատումի
Քաջաւառ վերթողն Միւթարեան
վարդապետն

Ի յօդուտափառ Պարտեն Տիրոգեան:

ԹՈՒՂԹ ԲԱՋՐԱՑՈՒՆԻՇՈՑ ԱՌ ԽՐԻՄԵԱՆ
ՎԱՐԺԱՊԵՏ

— — —

Արդոյ և Սիրելի Պարոն (Մկրտիչ Խրլմեան)

Զգիր քո առաքեալ առ իս ի 15 ամսոյս հանկերծ քերթուածովվզդ ընկալայ: Ընդ նկրողամիտ զովութիւնսդ յոյժ ամեացի, իսկ խնդութիւն միայն այս եղեւ ինձ, զի զայդպիսի աննախանձ բարեխնդիր ողի ծանեայ յազգիս, և միանգամայն այշչափ

սիրատենչ և փոյթ և բաջ աշակերտեալ բում հին նախնեացն զեղեցիկ ախորժաւակաց: Եւ գոհութիւն վասն այսոցիկ մատուցի նախ Աստուծոյ, և ապա սովոր զրովս պարտ վարկանիմ մատուցանել բում սիրելութեանդ, և աղաչեմ սիրողաբար ընդունել զսերտ սրտիւ շնորհակալութիւնս, և զգարմանս իմ ընդ այցան բաջութիւն գրչիդ, որով ճշմարտս յանձին և ի գիր զամացեալդ զբէն թէ «Ձօք ծըծեալ Հայաստանեայց» շոյտ ըզգացի զոփի նախնեացն: Վասն որոյ և ոչինչ ունիմ ասել յուղութիւն գրելոցդ, բաց ի զեղչելոյ անսի զգովեստոդ զինէն: Իսկ ընդ համեստ և ծանր բանիցն ոչ սակաւ և զուարնութիւն համարիմ ես տեսանել ի նոռա, եթէ նախնեացն զովութիւնը և նոցին վաղեմի չափոց ախորժակը հարկաւ և զուարնալիք իցին հայրենասէք ոգուց: Վասն որոյ և առաջին պատեհաւ առաքեցից զամենայն տառադ ի վասն մեր ի յեռուզ ի բազմավէպն, եթէ՝ և որպէս ինչ և նոցահանոյ թուիցի:

Ներեսչիր ինձ զայս եւեթ յուշ տանել իմաստութեան բում, թերեւս յօգուտ առ յապա փափաքիլի երկոցդ ի նոյն չափս, զի քո կարի յաճախեալ է և անխսիր յայս տաղ դիցազնական եռավանդ զնել զըրրորդ անդամն, զոր իմ պատշաճագոյն գատեալ ի թատերական աշխոյժ զրուցատութեան չափս, կամ յալլ նմանօրինակս (Յոշբն. էջ 21. ծան. Արատ. քերթ. ծան. 80), վասն որոյ և զոմ ուրեք խառն վարեալ է ընդ բառավանկ չըրրորդ անդամն դիցազնական տաղից:

Աղջ մինել ըղձանամ բում ազնուութեանդ Խ. Ա.

Ի Խորուրդն 20 ապրիլ 1849. Հ. Ա. Կ. Բ.

Աղջիս Պարոն (Մկրտիչ Խրլմեան¹)

Ընկալայ ի ժամուն շնորհակալութեամբ զնուէք նուագացդ աստուածայնոց և զիկրոդ որ ի 14 մայիսի, այսօր զմիւսդ որ ի 4

1. Զունինք զմշաղդաբար Խրլմեանի այն բուղթը՝ ոռու պատախանն է բազրատուանոյ ներկայ նամակը: